ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԸ*

Գարիկ Քեռյան

Բանալի բառեր՝ Ադրբեջան, ռազմական դոկտրին, Հայաստան, Հարավային Կովկաս, ռազմական անվտանգություն, ռազմական սպառնալիքներ, անվտանգություն:

Հարավային Կովկասը և Կասպյան տարածաշրջանը աշխարհաքաղաքական, աշխարհառազմավարական, աշխարհատնտեսական և աշխարհագրական տեսանկյունից շատ բարդ և զգայուն են: Հետազոտողների մեծ մասը այն բնութագրում է որպես բաց և արտաքին ազդեցություններին ենթակա տարածաշրջան: Հարավկովկասյան-մերձկասպյան պետությունների ռազմական դոկտրինները և դրանց հիման վրա վարվող ռազմական քաղաքականության հետազոտությունը արդիական է մի կողմից տարածաշրջանային խաղաղության և կայունության բնութագրման և գնահատման, իսկ մյուս կողմից՝ լարվածության, բախումների, ճգնաժամերի և հակամարտությունների առաջացման վտանգների կանխատեսման առումով:

Ռազմական դոկտրինը, լինելով պետության ռազմական անվտանգության ոլորտում տեսակետների համակարգի պաշտոնական հայտարարություն, սահմանում է երկրի ռազմական անվտանգության ռազմաքաղաքական, քաղաքական-ռազմավարական և քաղաքական-տնտեսական հիմքերը, ներառյալ պետության և նրա զինված ուժերի մարտական պատրաստության ուղղությունները, ռազմական ռազմավարության իրականացման մեթոդներն ու ձևերը: Անվտանգության ոլորտում ռազմական իրավիճակի փոփոխության հետ կապված ցանկացած պետության ռազմական դոկտրինի դրույթները բխեցվում են ռազմաքաղաքական իրավիճակից, ինչպես նաև ներքաղաքական զարգացման և ռազմավարական ընտրության հարցում արմատական փոփոխություններից: Այս առումով ռազմական դոկտրինի վերանայումը և թարմացումը, ժամանակ առ ժամանակ, բավականին սպասելի երևույթ է:

Որպեսզի գնահատենք ռազմական դոկտրիններում առկա տեսակետների ազդեցությունը խաղաղության և կայունության կայացման, ազատության և ժողովրդավարության զարգացման, ինչպես նաև Հարավային Կովկասում մարդկանց բարեկեցության վրա, նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել և ճիշտ գնահատել տարածաշրջանի երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ռազմական դոկտրինները, բայց ոչ թե մեկուսի, այլ տարածաշրջանում ավանդական հետաքրքրություններ ունեցող Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի ռազմական դոկտրինների լույսի ներքո:

Սկզբից ևեթ նշենք, որ Ադրբեջանը ժողովրդավարական պետություն չէ, քաղաքական որոշումները ընդունվում են կամ միանձնյա՝ Իլհամ Ալիևի կողմից, կամ էլ նրա մերձավորագույն նեղ շրջապատի մեջ մտնող կառավարական վերնախավի պաշտոնյաների կողմից: Այս առումով թերևս բոլորի համար էլ պարզ է, որ քաղաքագիտական և այլ հետազոտությունների ժամանակ լուրջ չպետք է ընդունել ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական ոլորտին առնչվող սահմանադրական և օրենսդրական ակտերը: Բայց հայ-ադրբեջանական ներկա հարաբերությունների մակարդակը և կիսապատերազմական վիճակը այնուամենայնիվ պահանջում են լուսաբանել Ադրբեջանի արտաքին և անվտանգային քաղաքականության ոլորտին վերաբերող ռազմավարական փաստաթղթերը և օրենսդրական ակտերը՝ մասնավորապես

---

* Հոդվածն ընդունվել է 22.01.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.թ., դոցենտ Ն. Բաղդասարյանը: 30.01.20:

ազգային անվտանգության հայեցակարգը և ռազմական դոկտրինը, որոնք հրապարակայնացնում և առանձնացնում են իրենց ընկալմամբ արտաքին վտանգներն ու մարտահրավերները: Այն կարևոր է նաև մեր ազգային անվտանգության նոր օրենսդրական փաստաթղթերի մշակման համար:

Ադրբեջանի Հանրապետությունը Վրաստանի, Հայաստանի Հանրապետության համեմատ միակ պետությունն է, որը չի կատարել իր ռազմավարական ընտրությունը: Ադրբեջանում պաշտոնական մակարդակով միշտ շեշտադրում են եվրոատլանտյան ինտեգրման կարևորությունը, բայց խուսափում են ՆԱՏՕ-ին կամ ԵՄ-ին անդամակցելու նպատակը դարձնել օրակարգային: Ժողովրդավարացման գործում թերացման համար Արևմուտքից եկող քննադատությունը դժկամությամբ է ընդունվում, իսկ ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիրը, ինչպես վերջերս հայտարարեց Ի. Ալիևը, երկրորդային է, անիմաստ և բացառել է երկրի ասոցացումը ԵՄ-ին[1]: Ադրբեջանը նաև ՀԱՊԿ անդամ չէ և գերադասում է միջազգային ասպարեզում ներկայանալ որպես չմիացած և չեզոք երկիր: Այս իրողություններն իրենց ազդեցությունն են թողել պետական ռազմաքաղաքական փաստաթղթերի վրա: Ընդհանուր տպավորություն է նաև այն, որ նկատվում է ռազմավարական ընտրության հարցում ադրբեջանական երկմտանքներն ու անորոշությունները:

Պետության ռազմական անվտանգությունն ապահովելու հիմնական փաստաթուղթը՝ Ադրբեջանի ռազմական դոկտրինը (այսուհետ Դոկտրին), ընդունվել է 2010 թվականին[2]: Փաստաթուղթը մշակվել է երկրի ազգային անվտանգության հայեցակարգին համապատասխան, որն ընդունվել էր 2007 թվականին և ըստ իրենց պաշտոնական գնահատականի՝ ընդհանուր առմամբ պաշտպանական բնույթ է կրում: Ժամանակին ընդդիմադիր գործիչները նշում էին, որ փաստաթուղթը հաստատվել է հապշտապ, առանց խորհրդարանական և հասարակական լայն քննարկումների: Մինչ փաստաթղթի հատվածական վերլուծությանն անցնելը նշենք, որ Դոկտրինի տարբեր հատվածներում կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ երկրի ազգային անվտանգության վրա բացասաբար անդրադարձող գլխավոր գործոնը Ադրբեջանի տարածքի մի մասի գրավումն է Հայաստանի կողմից և գրավյալ տարածքներում Հայաստանի կողմից էթնիկ զտման քաղաքականության վարումը և ագրեսիվ գործողությունների շարունակությունը, որոնք հանգեցրել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների ոչնչացման[3]: Այս հանգամանքը համարվում է երկրի ռազմական անվտանգության գլխավոր սպառնալիք[4], և հնարավոր ռազմական գործողություններ սպասվում են միայն Հայաստանից[5]:

Այժմ փորձենք վերհանել այն դրույթները, որոնք մեզ համար կարող են հետաքրքրություն ներկայացնել: Սկզբում, ընդհանուր դրույթների մեջ նշվում է, որ Ադրբեջանը ***ունիտար*** *պետություն է[6]: Ադրբեջան պետության ունիտարության շեշտումը հերթական ապացույցն է այն իրողության, որ նախկին ԼՂԻՄ տարածքի միացումը Ադրբեջանին քարոզչական մակարդակում է և պետական նշանակության տվյալ գործողությունների ծրագրում՝ ռազմական Դոկտրինում իրատեսական չի համարվում:*

Դոկտրինի երկրորդ բաժնում նշված են Ադրբեջանի անվտանգության հետ շաղկապված տարածաշրջանային անվտանգային միջավայրի վրա ազդող գործոնները, որոնք են՝ աշխարհաքաղաքական անկայունությունը, ռազմաքաղաքական հակամարտությունների և ***ագրեսիվ անջատողականության*** *առկայությունը և դրանց վտանգավորությունը տնտեսական, հաղորդակցային և էներգետիկ ենթակառուցվածքների համար[7]: Փաստաթղթում առանձնակի շեշտադրում է արվում սպառազինությունների կուտակման և դրանց անվերահսկելիության վրա: Նշվում է, որ Ադրբեջանի Հանրապետության գրավյալ տարածքները մնացել են միջազգային վերահսկողության ցանկացած ձևից դուրս: Որպես արդյունք կուտակվել է զենք, զինամթերք և ռազմական տեխնիկա, որոնք չեն ընդգրկվել 1990 թ.-ին Եվրոպայում սովորական զինված ուժերի պայ-*

մանագրի և «Վստահության ձևավորման և վստահության ամրապնդման միջոցների մասին» բանակցությունների 1990 թ. Վիեննայի փաստաթղթում[8]: Այստեղ միտում կա տարածաշրջանի ռազմականացման բարձր աստիճանի մեղքը բարդել միայն Հայաստանի վրա: Միջազգային հանրության աչքում երևալու համար նշվում է, որ չեն գործում մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային մեխանիզմները, կան թրաֆիքինգ, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրություն, զենքի անօրինական առևտրի տարանցիկ ուղիներ:

Այն դրույթը, որ առանձին ուժերը շարունակում են ջանքեր գործադրել տարբեր տարածաշրջաններում անջատողական տրամադրություններ ստեղծելու համար, արտացոլված է Դոկտրինի 2.17 հոդվածում: Չնայած դա բացահայտորեն չի ասվում, սակայն ակնհայտ է դառնում այն փաստը, որ «առանձին ուժեր» ասելով նկատի ունեն Ռուսաստանը, Իրանը և իհարկե Հայաստանը: Առանձնացված են «ներքին ռազմական և քաղաքական սպառնալիքները»՝ ահաբեկչական, կրոնական ծայրահեղականների, ազգային անջատողական կազմակերպությունների և կառույցների ապօրինի գործողությունները, որոնք իրականացվել են նրանց կողմից ուժի կիրառմամբ և ուղղված են երկրի ներքին կայունության և տարածքային ամբողջականության խախտմանը[9]: Դժվար չէ կռահել, որ խոսքը ամբողջությամբ վերաբերում է Արցախին:

Դոկտրինի չորրորդ բաժինը վերաբերում է Ադրբեջանի պաշտպանական քաղաքականության հիմնադրույթներին: Այս հատվածում նույնպես անդրադարձ կա Հայաստանին և Արցախին: Հայաստանի ցանկացած քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ օժանդակություն «գրավյալ ադրբեջանական տարածքներում հաստատված անջատողական ռեժիմին» բնութագրվում է որպես Ադրբեջանի Հանրապետության դեմ ուղղված գործողություն[10]: Ադրբեջանը իրեն իրավունք է վերապահում «օգտագործել բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ ռազմական ուժը, որպեսզի վերականգնվի իր տարածքային ամբողջականությունը միջազգային իրավական նորմերին և սկզբունքներին համապատասխան»[11]:

Ռազմաքաղաքական առումով կարևոր է նշել, որ Դոկտրինը բացառում է երկրում ***օտարերկրյա ռազմական ներկայության հնարավորությունը.*** *«Ադրբեջանի Հանրապետությունը թույլ չի տալիս իր տարածքում տեղակայել օտարերկրյա ռազմական հենակետեր, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են միջազգային պայմանագրերով, որոնցով նա հանդիսանում է կողմ: Միևնույն ժամանակ, ռազմաքաղաքական իրավիճակի արմատական փոփոխությունների դեպքում Ադրբեջանի Հանրապետությունը իրավունք է վերապահում համաձայնություն տալ իր տարածքում օտարերկրյա ռազմական հենակետերի ժամանակավոր տեղակայմանը կամ այլ ձևով օտարերկրյա ռազմական մասնակցության համար տարածք հատկացնելուն»[12]: Կարելի է եզրակացնել, որ հիշյալ դրույթը որոշակի սողանցք է երկրի տարածքում թուրքական ռազմական բազայի կամ հակամարտության գոտում խաղաղապահ զինուժի տեղակայման հնարավորություն ստեղծելու համար:*

Ադրբեջանի ռազմական անվտանգության գնահատման գործում կարևորվում է հնարավոր պատերազմների, ռազմական ագրեսիայի և ահաբեկչական գործողությունների հավանականությունների գնահատումը: Ըստ Դոկտրինի՝ կայունության և խաղաղության գլխավոր վտանգը տեղական պատերազմներն ու զինված բախումներն են, իսկ արտաքին ռազմական վտանգի առումով նշված է, որ «որևիցե պետության (բացառությամբ Հայաստանի Հանրապետության) ռազմական ագրեսիայի հավանականությունը ներկայումս Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ գտնվում է աննշան մակարդակի վրա»[13]: Ադրբեջանի ռազմական անվտանգության համար ռազմական սպառնալիքի հիմնական աղբյուր է համարվում Հայաստանի կողմից զինված ագրեսիայի «միտումնավոր վերսկսումը», «զինված հակամարտության անվերահսկելի ընդլայնումը», «կրակի գծում տեղական բախումների աճը և դրանց վերածումը մասշտա-

բային ռազմական գործողությունների», «տարածքային ամբողջականությունը միջազգային իրավական նորմերին և սկզբունքներին համապատասխան վերականգնելու նպատակով» ռազմական գործողությունների վերսկսումը[14]: Ի դեպ, անհասկանալի է այն, որ Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսումը 43-րդ հոդվածում որակվում է որպես հակամարտության քաղաքական կարգավորմանն ուղղված անհրաժեշտ գործողություն: Սրա հետ մեկտեղ, Ադրբեջանի վերլուծաբանները գտնում են, որ ռազմական դոկտրինն ունի պաշտպանական բնույթ[15]: Առավել չեզոք վերլուծական կենտրոններում գտնում են, որ Դոկտրինի վերոհիշյալ դրույթները շոշափում են նաև հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի ռազմաքաղաքական անվտանգության շահերը, քանի որ բացասական են գնահատում ՌԴ-ՀՀ ռազմաքաղաքական համագործակցությունը և իջեցնում են դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Ռուսաստանի դերակատարման աստիճանը[16]: Հակասություն կա նաև արտաքին ռազմական դաշինքներին չմիանալու մասին դրույթի և 61-րդ հոդվածի բովանդակության միջև, որտեղ նշվում է, որ «այս փուլում և միջնաժամկետ հեռանկարում զինված ուժերի և պետության այլ զինված ուժերի կազմակերպման, զարգացման և վերապատրաստման հիմնական գերակայություններից մեկը ՆԱՏՕ-ի հետ գործընկերության հնարավոր միջոցների համապարփակ օգտագործումն է, «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում ակտիվացումը և ապագա ինտեգրումը: ՀԱՊԿ անդամության վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում չկա, դրա պատճառը այս կառույցին Հայաստանի ակտիվ մասնակցությունն է: Միաժամանակ Ադրբեջանը բազմիցս բարձրաձայնել է Հյուսիսատլանտյան դաշինքին միանալու կարևորության մասին և ստորագրել համապատասխան պարտավորություններ: Բացի այդ, ռազմաքաղաքական կազմակերպությունների հետ հանրապետության համագործակցության մասին կա առանձին դրույթ, ըստ որի «Երկկողմ և բազմակողմ ռազմաքաղաքական համագործակցության ամրապնդման և միջազգային անվտանգությանն օժանդակելու ուղղությամբ անհրաժեշտ է ջանքեր գործադրել անվտանգության համակարգ ստեղծելու համար Եվրատլանտյան տարածքում, ներառյալ այն տարածաշրջանը, որտեղ գտնվում է Ադրբեջանի Հանրապետությունը, շարունակել համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ փոխադարձ հետաքրքրությունների հիման վրա»[17]: Անհասկանալի է մնում, թե ինչ նկատի ունեն՝ նշելով Եվրանտլանտյան տարածաշրջանում անվտանգության համակարգ ստեղծելու մասին, կամ Ադրբեջանը ինչով է նպաստելու արդեն յոթ տասնամյակ գոյություն ունեցող դաշինքի ամրապնդմանը: Պետք է հիշենք նաև այն փաստը, որ 2006 թվականին Ադրբեջանը և Միացյալ Նահանգները ստորագրեցին երկկողմանի համաձայնագիր, որի համաձայն ռուսական սարքավորումները և ռազմական տեխնիկան պետք է փոխարինվեն ՆԱՏՕ-ի անդամ երկրներում արտադրված համակարգերով[18]: Տրամաբանական է ենթադրել, որ միտում կար նվազեցնելու Ռուսաստանի և Ադրբեջանի միջև ռազմատեխնիկական համագործակցությունը: Գաղտնիք չէ, որ ռազմական անվտանգության հարցերում ամենաակտիվ համագործակցությունը Ադրբեջանը զարգացնում է հատկապես Թուրքիայի հետ: Մասնավորապես, 1996 թվականից ի վեր, Ադրբեջանում աշխատում են թուրք ռազմական խորհրդատուները, իսկ ադրբեջանցի զինվորականները պատրաստվում և վերապատրաստվում են Թուրքիայում: 1997-ին պետությունների միջև ստորագրվեց անվտանգության համագործակցության մասին արձանագրություն, իսկ 2002-ին՝ ռազմական համագործակցության նոր համաձայնագիր: 1999 թվականից ի վեր, Թուրքիան պարբերաբար ֆինանսական միջոցներ է հատկացրել Ադրբեջանի զինված ուժերի արդիականացման համար: 2007թ. Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող օգնության ընդհանուր գումարը կազմել է 170 մլն. դոլար[19]: Ադրբեջանը մասնակցում է նաև ԱՄՆ «Կասպյան պահապան» ծրագրին, որի ընթացքում ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը, Ղազախստանը և Ադրբեջանը համակարգում

են իրենց ջանքերը Կասպից ծովում անվտանգության համակարգի ամրապնդման, նավթի և գազի օբյեկտների և ածխաջրածնային փոխադրումների ուղիների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ[20]: Այնուամենայնիվ, որոշ վերլուծաբաններ պնդում են, որ Ադրբեջանի և Միացյալ Նահանգների միջև ռազմավարական գործընկերության հեռանկարները շատ անորոշ են[21]: Հետաքրքիր է նաև այն, որ Պենտագոնի պաշտոնական կայքում 2014 թ. հունվարին Ադրբեջանը նշված էր այն երկրների շարքում, որտեղ ամերիկյան զինվորների ներկայությունը կարող է վտանգավոր լինել նրանց կյանքի համար[22]:

*Ի վերջո ամփոփելով մեր հետազոտությունը՝ կարող ենք արձանագրել, թե տարածաշրջանային անվտանգության իրավիճակի և անվտանգության միջավայրի բնութագրման մարտահրավերների մասին ինչ դրույթներ է պարունակում **Ադրբեջանի Հանրապետության ռազմական դոկտրինը.***

- իրավիճակի աստիճանական բարդացում և սրացում, հատկապես 2008-ի վրացական ճգնաժամից հետո.

- տարածաշրջանում Հայաստանի դաշնակից և ՀԱՊԿ-ի առաջնորդ Ռուսաստանի ռազմական ներկայության աստիճանի բարձրացում և ուժեղացում.

- Հայաստանի սպառազինությունների որակական և քանակական աճ.

- Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը շարունակվում է: Հայաստանի և Ադրբեջանի միջև կա ռազմական իրավիճակ, ինչպես նաև հրադադարի ռեժիմի պարբերական խախտումներ.

- անկայունություն Հարավային Կովկասում: Ռուսաստանի Դաշնությունը այս տարածաշրջանում հավաքում է զինված ուժերը ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով.

- Իրանի շուրջ լարվածություն, նրա հրթիռային և միջուկային ծրագրերի նկատմամբ միջազգային պատժամիջոցներ.

- Ադրբեջանը գտնվում է պատերազմական իրավիճակում և չունի ռազմաքաղաքական դաշնակիցներ, որևէ ռազմական դաշինքի անդամ չէ.

- Այս իրավիճակը հնարավոր չի դարձնում հավասարակշռել պետությունների խախտված տարածաշրջանային ռազմական և ռազմավարական շահերը, ինչը, իր հերթին, թույլ չի տալիս նախադրյալներ ստեղծել հակամարտությունների լուծման համար, ինչպես նաև բարելավել Ադրբեջանի անվտանգության միջավայրը.

-Ադրբեջանի ռազմավարական դիրքորոշումների տատանումներ սահմանակից Ռուսաստանի, Հայաստանի, Իրանի, Թուրքիայի և Վրաստանի իրար հակասող և բախվող արտաքին քաղաքական նպատակների ու շահերի համատեքստում, որը բացասաբար է անդրադառնում տարածաշրջանում անվտանգության ապահովման վրա.

- բնական և հավանական դաշնակիցների հետ հարաբերությունների «անառողջ» զարգացման միտումներ:

Վերջում հավելենք նաև, որ Դոկտրինի հոդվածների մեջ տարբեր ձևակերպումներով Հայաստանի Հանրապետությունը նշվում է որպես Ադրբեջանի Հանրապետության ռազմական անվտանգության վրա ներազդող հիմնական արտաքին գործոն: Անուղղակի կերպով բացասական է բնութագրվում նաև Ռուսաստանի դերը, որը հիմնավորվում է կոնֆլիկտների ձևավորման գործընթացում և դրանց կառավարման մեջ (օրինակ՝ աջակցություն հայ անջատողականությանը) նրա ունեցած մասնակցությամբ: Այս առումով, առանց նույնիսկ նշելու Ռուսաստանի Դաշնությունը արտաքին սպառնալիքների շարքում, ռազմական անվտանգության ոլորտի խնդիրների թվարկումից կարող ենք նման եզրակացության հանգել: Օրինակ փաստաթղթի 3.2 հոդվածը ռազմական սպառնալիք է դիտարկում տարածաշրջանում ռազմական բազաների ստեղծումը: Եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ Հարավային Կովկասում միակ օտարերկրյա ռազ-

մական բազան Գյումրիում տեղակայված ռուսական ռազմաբազան է, ապա ամեն ինչ հասկանալի կդառնա: Ի հավելումն ասվածի՝ նշենք, որ Դոկտրինի մի քանի հոդվածներ Ադրբեջանի ժամանակակից անվտանգության քաղաքականության, արտաքին քաղաքականության, ներառյալ արտաքին ռազմական քաղաքականության ոլորտներում բնական և հավանական դաշնակիցներ են համարում հիմնականում Թուրքիան, Վրաստանը, ԱՄՆ-ն, ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն և ոչ Ռուսաստանը[23]: Եվ սա այն դեպքում, երբ Ի. Ալիևը իր հրապարակային ելույթներում ռուս-ադրբեջանական հարաբերությունները բնութագրում է որպես ռազմավարական համագործակցություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս https://www.youtube.com/watch?v=lp-DBPRN4Ow
2. Տե՛ս **ВОЕННАЯ ДОКТРИНА АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ,** Утверждена Постановлением Милли Меджлиса Азербайджанской Республики от 8 июня 2010 года №1029-IIIQR, Http://eurasian-defence.ru/?q=node/30532
3. Տե՛ս երկրորդ բաժնի 14-րդ և 16-րդ հոդվածները
4. Տե՛ս երրորդ բաժնի 21-րդ հոդվածը
5. Տե՛ս հինգերորդ բաժնի 43-րդ հոդվածը
6. Տե՛ս ընդհանուր դրույթների երկրորդ կետը
7. Տե՛ս երկրորդ բաժնի 13-րդ հոդվածը
8. Տե՛ս երկրորդ բաժնի 15-րդ հոդվածը
9. Տե՛ս երրորդ բաժնի 22-րդ հոդվածը
10. Տե՛ս չորրորդ բաժնի 28-րդ հոդվածը
11. Տե՛ս նույն տեղում
12. Տե՛ս չորրորդ բաժնի 29-րդ հոդվածը
13. Տե՛ս հինգերորդ բաժնի 42-րդ հոդվածը
14. Տե՛ս հինգերորդ բաժնի 43-րդ հոդվածը
15. Տե՛ս **Мамедов С.** Военная доктрина Азербайджана носит оборонительный характер // Интернет-портал «Независимое военное обозрение», http://nvo.ng.ru/concepts/2010-06-25/13_azerbaijan.html.
16. Տե՛ս Принята военная доктрина Азербайджана// Интернет-портал «Кавказский узел». [Электронный ресурс], http://www.kavkaz-uzel.ru/articles/169904
17. Տե՛ս Դոկտրինի 35.5 հոդվածը և **Мамедов С.** Военная доктрина Азербайджана носит оборонительный характер // Интернет-портал «Независимое военное обозрение». [Электронный ресурс]. Режим доступа: http://nvo.ng.ru/concepts/2010-06-25/13_azerbaijan.html.
18. Տե՛ս Военно-техническое сотрудничество // АРМС-ТАСС.–2006, № 3.–16-22 января.–էջ. 10.
19. Տե՛ս **Маркедонов С**. Чего не может НАТО // Политком. ру- 2007. – 31 января. [Электронный ресурс]. http://www.politcom.ru/article.php?id=4091
20. Տե՛ս Мамедов С. Баку мало простого партнерства с НАТО// Независимая газета – 27.09.2006. [Электронный ресурс]. http://www.ng.ru/cis/2006.09.27/6_baku/html.
21. Տե՛ս Посла США в Азербайджане больше интересует энергетика, чем проблема демократии. Интернет-портал Научное Общество Кавказоведов. [Электронный ресурс]. http://www.kavkazoved.info/news/2012/07/18/novyj-posol-usa-v-

azerbajdzhane-pribudet-s-novymi-podhodami.html.
22. Տե՛ս Мамедов Ф. Пентагон признал присутствие американских военных в Азербайджане// [Электронный ресурс]. http://haqqin.az/news/15126
23. Տե՛ս Դոկտրինի չորրորդ բաժնի հոդվածները

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ադրբեջանի Հանրապետության ռազմական դոկտրինը
Գարիկ Քեռյան

Հարավկովկասյան տարածաշրջանում միջպետական հարաբերությունների մակարդակը, կոնֆլկտները և կիսապատերազմական վիճակը պահանջում են լուսաբանել Ադրբեջանի անվտանգային քաղաքականության ոլորտին վերաբերող ռազմավարական փաստաթղթերը և մասնավորապես ռազմական դոկտրինը: Այն հրապարակայնացնում և առանձնացնում է Ադրբեջանի պաշտոնական տեսակետը արտաքին վտանգների ու մարտահրավերների մասին: Դոկտրինը նշում է նաև միջպետական հարաբերություններում հնարավոր ռազմատեխնիկական համագործակցության արդյունավետությունը: Ադրբեջանի ռազմական անվտանգության գնահատման գործում կարևորում է հնարավոր պատերազմների, ռազմական ագրեսիայի և ահաբեկչական գործողությունների հավանականությունների կանխատեսումը:

РЕЗЮМЕ
Военная доктрина Азербайджана
Гарик Керян

Ключевые слова: Азербайджан, военная доктрина, Армения, Южный Кавказ, военная безопасность, военные угрозы, безопасность.

Уровень межгосударственных отношений, конфликтов и ситуации «ни войны, ни мира» в регионе Южного Кавказа требует прояснения стратегических вопросов, связанных с политикой безопасности Азербайджана и, в частности, его военной доктриной. Она демонстрирует и отражает официальную точку зрения Азербайджана на внешние опасности и вызовы. Среди прочего, в доктрине подчеркивается и эффективность возможного военно-технического сотрудничества на уровне межгосударственных отношений. При оценке военной безопасности Азербайджана важно прогнозирование вероятностей возможных войн, военной агрессии и террористических актов.

SUMMARY
Military Doctrine of Azerbaijan Republic
Garik Keryan

Keywords: Azerbaijan, Military Doctrine, Armenia, South Caucasus, military security, military threats, security.

The level of interstate relations, conflicts and the paramilitary situation in the South Caucasus region requires clarification of strategic issues related to the security policy of Azerbaijan and, in particular, military doctrine. It publishes and shares the official point of view of Azerbaijan on external dangers and challenges. The doctrine also mentions the effectiveness of possible military-technical cooperation in interstate relations. When assessing the military security of Azerbaijan, it is important to consider the possibility of possible wars, military aggression and terrorist acts.